# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՕՎԵՐ ՓԼԵՅ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/93 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Բարձրացատկի հավաքածու – Հավաքածուն ներառում է բարձրացատկի կանգնակ և 2 ներքնակներ: Բարձրացատկի կանգնակները պետք է լինեն մետաղական հիմքով, պրեմիում դասի, բարձրացվող–իջեցվող համակարգով, 2000 մմ ցուցիչներով, բարձրությունը ֆիքսելու հուսալի համակարգով և հորիզոնական ձողը պահող համակարգով: Կանգնակների ոտքերը ամուր մետաղի տեսակներից պատրաստված, երեք տարբեր կողմեր ուղղված ոտքերը պետք է ապահովեն կանգնակների հուսալի կայունությունը՝ լայնությունը 30-50 մմ, երեք ոտքերի երկարությունները լինում են տարբեր՝ 300 մմ, 200 մմ, 200 մմ: Պետք է ամուր և կայուն կանգնի հատակին՝ երեք հենման կետերի վրա: Հորիզոնական ճկուն ձողը պատրաստված պետք է լինի ժամանակակից տեխնոլոգիաներով՝ բաղկացած սինթետիկ մանրաթելերից: Հորիզոնական ձողը պետք է լինի ճկուն՝ բազմակի օգտագործման: Ձողի երկարությունը 4000 մմ, տրամագիծը՝ 25 մմ, խողովակի երկու ծայրերին ամրացված լինեն պլաստմասե փականներ: Վայրէջքի գոտու ծածկույթը պատրաստված պետք է լինի բարձրորակ պոլիվինիլ քլորիդ 650 գ/քմ նյութից, բլոկի բարձրությունը 600 մմ է, ծածկույթը պետք է ունենա կողային օդի արտանետման փականներ: Նյութը պետք է լինի՝ վինիլային «PVC 650» ՊՎՔ 650 գ/քմ բարձրորակ ծածկույթով և արհեստական կաշվով: Պատյանը պետք է ունենա կայծակաճարմանդ, ճամպրուկի դիզայն: Վայրէջքի գոտու ներսում պետք է տեղադրված լինի 21 կգ/քմ խտությամբ PPU «փրփուր ռետինից» միջուկ՝ ոչ ավել, քան 3 կտոր: Վայրէջքի գոտին պետք է լինի փափուկ հագեցած կողքերի բռնակներով՝ արագ տեղափոխելու համար, հեշտ մաքրվող, խոնավակայուն, առանց հոտի: Չափերը՝ լայնություն 1700մմ, երկարություն 3000մմ, բարձրությունը 600 մմ: Նմուշը /Նկար 1/ կցվում է: |

| | |
|---|---|
| | Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ ըստ հասցեների իրականացվում է Վաճառողի կողմից: Մինչև մատակարարումը չափաբաժնում ներկայացված ապրանքների նմուշները համաձայնեցնել Գնորդի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել Գնորդի հետ: Հեռ. 010-599-699 (564) Նմուշ նկարները տրվում են զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չեն կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

СПЛАЙ ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/93 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |